

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹՎՊԻ-ի գիտական խորհրդի 2015թ. դեկտեմբերի 30-ի

նիստի /արձ.6/

1. Հաստատել ԺԷ.00.01. «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հեռակա ուսուցման ասպիրանտ Անի Լիպարիտի Տեր-Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Դերասանական արվեստի ավանդական փորձը 20-րդ դարի 60-80-ական թվականների հայ թատրոնում» վերնագրով, և ատենախոսության աշխատանքային պլանը:

1.1 ԺԷ.00.01. «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հեռակա ուսուցման ասպիրանտ Անի Լիպարիտի Տեր-Հովհաննիսյանի «Դերասանական արվեստի ավանդական փորձը 20-րդ դարի 60-80-ական թվականների հայ թատրոնում» վերնագրով թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին:

1.1.1 Անի Տեր-Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսությունը ղեկավարելու համար՝ մինչև 2019թ. նոյեմբերի 9-ը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին հատկացնել տարեկան 40 ժամ և 40 000 դրամ հավելավճար:

2. Հաստատել ներքոհիշյալ մասնագիտությունների և մասնագիտացումների 2016թ. ընդունելության մասնագիտական ծրագրերը և գնահատման չափանիշները՝

### 1. 021101.00.6 Տեսալսողական արվեստ

021101.02.6 Օպերատորություն

### 2. 021103.00.6 Կինոարվեստ

021103.01.6 Կինոարվեստ

### 3. 021301.00.6 Կերպարվեստ

021301.04.6 Թատրոնի, կինոյի և հեռուստառվորտի նկարչություն

### 4. 021503.00.6 Թատերական արվեստ

021503.01.6 Դերասանական արվեստ

021503.02.6 Ռեժիսուրա

**5. 021504.00.6 Պարարվեստի ռեժիսուրա**

021504.01.6 Պարարվեստի ռեժիսուրա

**6. 021801.00.6 Արվեստի տեսություն և պատմություն**

021801.01.6 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում

021801.04.6 Թատերագիտություն

021801.05.6 Կինոգիտություն

021801.06.6 Սցենարադրամատուրգիական արվեստ

**7. 021502.00.6 Կատարողական արվեստ**

021502.03.6 Պարարվեստ

**3. Հաստատել և գործողության մեջ դնել՝**

3.1 ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի կանոնակարգը

3.2 ԵԹԿՊԻ-ի գիտական մասի կանոնակարգը

3.3 ԵԹԿՊԻ-ի ուսումնական գործընթացի համակարգման բաժնի կանոնակարգը:

4. Հաստատել հետազոտողի կրթական ծրագրով «Թատերական արվեստ» և «Կինոարվեստ» մասնագիտությունների առկա և հեռակա ուսուցման ասպիրանտների և հայցորդների մասնագիտական ուսումնական պլանները:

5. Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար և ռուսաց լեզուների համալսարանի հետ միջբուհական համագործակցության նպատակով հանձնարարել դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնին ընտրել պիեսներ թարգմանության համար:

5.1 Կինոֆակուլտետի ավարտական աշխատանքների (ֆիլմերի) մակագրերում (տիտր) պարտադիր նշել «ԵԹԿՊԻ ստուկ-պրոդակշն» գրառումը:

5.2 Ծննդյան 70-ամյա հոբելյանի կապակցությամբ և ինստիտուտի ուսումնագիտական գործունեության մեջ ներդրած ավանդի համար ինստիտուտի նախկին շրջանավարտ Հրաչյա Վահագնի Գասպարյանին պարգևատրել ԵԹԿՊԻ-ի պատվո մեդալով:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան